## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

1960 թվականի ապրիլի 21-ին ակադեմիկոս Դ. Վ. ՍԿՈԲԵԼՑԻՆԻ նախագահությամբ տեղի ունեցավ «Ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման» միջազգային Լենինյան մրցանակների կոմիտեի նիստը:

Կոմիտեն քննության առավ միջազգային Լենինյան մրցանակներ շնորհելու վերաբերյալ ստացված առաջարկությունները և որոշում ընդունեց այդ հարցի առթիվ:

Ստորև հրապարակվում է կոմիտեի որոշումը միջազգային Լենինյան մրցանակներ շնորհելու մասին:

## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ» 1959 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 1960 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

Խաղաղության պահպանման և ամրապնդման պայքարի գործում մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար «Ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման» միջազգային Լենինյան մրցանակներ շնորհել.

դոկտոր ՍՈՒԿԱՌՆՈՅԻՆ — հասարակական ու պետական գործիչ (Ինդոնեզիայի Ռեսպուբլիկա).

Սայրուս ԻՏՈՆԻՆ — հասարակական գործիչ (ԱՄՆ).

Լորան ԿԱԶԱՆՈՎԱՅԻՆ — հասարակական գործիչ (Ֆրանսիա).

Ալեքսանդր Եվդոկիմովիչ ԿՈՌՆԵՅՉՈՒԿԻՆ — գրող, հասարակական գործիչ (ՍՍՌՄ).

Ազիզ ՇԵՐԻՖԻՆ — հասարակական գործիչ (Իրաքի Ռեսպուբլիկա):

*Կոմիտեի նախագահ՝ ԴՄԻՏՐԻ ՍԿՈԲԵԼՑԻՆ*

*Կոմիտեի նախագահի տեղակալներ՝*

*ԳՈ ՄՈ-ԺՈ, ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ*

*Կոմիտեի անդամներ՝ ԳՐԻԳՈՐԻ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎ,*

*ՋՈՆ ԲԵՌՆԱԼ, ՅԱՆ ԴԵՄԲՈՎՍԿԻ, ԱՆՆԱ ԶԵԳԵՐՍ,*

*ՊԱԲԼՈ ՆԵՐՈՒԴԱ, ՄԻԽԱՅԻԼ ՍԱԴՈՎՅԱՆՈՒ,*

*ՍԱՀԻԲ ՍԻՆԳՀ ՍՈՔՀԵՅ, ԻԼՅԱ ԷՐԵՆԲՈՒՐԳ*

# ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԼԵՆԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Գիտության և տեխնիկայի Լենինյան մրցանակների կոմիտեն ՈՐՈՇԵՑ.

## I

1960 թվականին Լենինյան մրցանակներ շնորհել ԳԻՏՈՒԹՅԱՆ բնագավառի առավել աչքի ընկնող հետևյալ աշխատանքների համար.

1. Սերգեյ Նիկոլաևիչ ՎԵՌՆՈՎԻՆ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Ալեքսանդր Եվգենևիչ ՉՈՒԴԱԿՈՎԻՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Պ. Ն. Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտի աշխատակիցներ. Նիկոլայ Վասիլևիչ ՊՈՒՇԿՈՎԻՆ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Երկրի մագնիսականության, իոնոսֆերայի և ռադիոալիքների տարածման ինստիտուտի դիրեկտոր, Շմայա Շլեմովիչ ԴՈԼԳԻՆՈՎԻՆ, նույն ինստիտուտի մագնիսային լաբորատորիայի պետ,— Երկրի արտաքին ճառագայթագոտու հայտնագործման ու հետազոտման և Երկրի ու Լուսնի մագնիսական դաշտի հետազոտման համար:

2. Ալեքսանդր Իլյիչ ԼԵՅՊՈՒՆՍԿՈՒՆ, Ուկրաինական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Օլեգ Դմիտրիևիչ ԿԱԶԱՉԿՈՎՍԿՈՒՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, Իգոր Իլյիչ ԲՈՆԴԱՐԵՆԿՈՅԻՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, Լև Նիկոլաևիչ ՈՒՍԱՉԵՎԻՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, ՍՍՌՄ Մինիստրների Սովետին առընթեր Ատոմային էներգիայի օգտագործման գլխավոր վարչության Ֆիզիկայի ինստիտուտի գիտական աշխատակիցներ,— արագ նեյտրոններով միջուկային ռեակտորների ֆիզիկայի գիտական հետազոտությունների համար:

3. Վլադիմիր Ալեքսանդրովիչ ՖՈԿԻՆ,— ակադեմիկոս, դաշտի կվանտային տեսության ասպարեզում կատարած հետազոտությունների համար, որոնք շարադրված են 1957 թվականին հրապարակված՝ «Աշխատանքներ դաշտի կվանտային տեսության ասպարեզում» մենագրության մեջ:

4. Նիկոլայ Գուրևիչ ՉԵՏԱԵՎԻՆ,— շարժման հաստատունության և անալիտիկ մեխանիկային նվիրված աշխատությունների համար, որոնք հրապարակվել են 1952 — 1958 թթ.:

5. Անատոլի Եվսեևիչ ԿՐԻՍՍԻՆ, կենսաբանական գիտությունների դոկտոր,— 1959 թվականին հրապարակված՝ «Ծովային միկրոբիոլոգիա (խորջրյա)» գիտական աշխատության համար:

6. Ալեքսանդր Ալեքսանդրովիչ ՎԻՇՆԵՎՍԿՈՒ, Պյոտր Անդրեևիչ ԿՈՒՊՐԻԱՆՈՎԻՆ, Եվգենի Նիկոլաևիչ ՄԵՇԱԼԿԻՆԻՆ, Բորիս Վասիլևիչ ՊԵՏՐՈՎՍԿՈՒՆ, բժշկական գիտությունների դոկտորներ,— սրտի և խոշոր արյունատար անոթների նոր վիրահատություններ մշակելու համար:

7. Սերգեյ Դմիտրիևիչ ՊՈՆՈՄԱՐՅՈՎԻՆ, պրոֆեսոր, Վադիմ Լվովիչ ԲԻԴԵՐՄԱՆԻՆ, դոցենտ, Կոնստանտին Կոնստանտինովիչ ԼԻԽԱՐՅՈՎԻՆ, դոցենտ, Նիկոլայ Նիկոլաևիչ ՄԱԼԻՆԻՆԻՆ, պրոֆեսոր, Վսեվոլոդ Իվանովիչ ՖԵՈԴՈՍԵՎԻՆ, պրոֆեսոր, Մոսկվայի Ն. Է. Բաումանի անվան Բարձրագույն տեխնիկական ուսումնարանի դասախոսներ, Վլադիմիր Միխայլովիչ ՄԱԿՈՒՇԻՆԻՆ, դոցենտ, Մոսկվայի Պոլիգրաֆիական ինստիտուտի դասախոս,— «Ամրության հաշվարկումները մեքենաշինության մեջ» գիտական աշխատության համար, որը հրապարակվել է երեք հատորով, 1956 — 1959 թթ.:

8. Յակով Զալմանովիչ ՑԻՊԿԻՆԻՆ, տեխնիկական գիտությունների դոկտոր,— իմպուլսային և ռելեային ավտոմատ սիստեմների տեսությանը նվիրված աշխատությունների համար, որոնք շարադրված են 1951 — 1958 թթ. հրապարակված հետևյալ մենագրություններում. «Անցողական և հաստատված պրոցեսները իմպուլսային շղթաներում», «Ավտոմատ կարգավորման ռելեային սիստեմների տեսություն», «Իմպուլսային սիստեմների տեսություն»:

## II

1960 թվականի Լենինյան մրցանակներ շնորհել տեխնիկայի բնագավառի առավել աչքի ընկնող հետևյալ աշխատանքների համար.

1. Սավելի Մոիսեևիչ ՖԱՅՆԲԵՐԳԻՆ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ի. Վ. Կուրչատովի անվան ատոմային էներգիայի ինստիտուտի տեսական սեկտորի պետ, Վլադիմիր Վլադիմիրովիչ ԳՈՆՉԱՐՈՎԻՆ, Գեորգի Ալեքսեևիչ ՍՏՈԼՅԱՐՈՎԻՆ, Տարաս Նիկոլաևիչ ԶՈՒԲԱՐԵՎԻՆ, նույն ինստիտուտի գիտական աշխատակիցներ, Պյոտր Իվանովիչ ԽՐԻՍՏԵՆԿՈՅԻՆ, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Տեսական և էքսպերիմենտալ ֆիզիկայի ինստիտուտի սեկտորի գլխավոր ինժեներ, Վալենտին Ֆյոդորովիչ ԿՈԶԼՈՎԻՆ, Օլեգ Իվանովիչ ԼՅՈՒԲԻՄՑԵՎԻՆ, Գիտա-հետազոտական ինստիտուտի աշխատակիցներ,— ՎՎՌ — 2, ՎՎՌ — Ս և ԻՌՏ ջրային հետազոտական ռեակտորների կոմպլեքս ստեղծելու համար:

2. Սերգեյ Վլադիմիրովիչ ԻԼՅՈՒՇԻՆԻՆ, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Ավիացիոն տեխնիկայի պետական կոմիտեի գլխավոր կոնստրուկտոր. աշխատանքի ղեկավար, Ալեքսանդր Գեորգիևիչ ԻՎՉԵՆԿՈՅԻՆ, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Ավիացիոն տեխնիկայի պետական կոմիտեի գլխավոր կոնստրուկտոր, Վլադիմիր Կոնստանտինովիչ ԿՈԿԻՆԱԿԻՆ, փորձարկող օդաչու, Վալերի Աֆրիկանովիչ ԲՈՐՈԴԻՆ, Վիկտոր Միխայլովիչ ԳԵՐՄԱՆՈՎԻՆ, Ալեքսեյ Նիկոլաևիչ ՉԼԵՆԿՈՅԻՆ, Անատոլի Յակովլևիչ ԼԵՎԻՆԻՆ, Վլադիմիր Ալեքսեևիչ ԼՈՏԱՐԵՎԻՆ, Անատոլի Կոնստանտինովիչ ՊԱՆՏԵԼԵԵՎԻՆ, Եվգենի Իվանովիչ ՍԱՆԿՈՎԻՆ, Վիկտոր Նիկոլաևիչ ՍԵՄՅՈՆՈՎԻՆ, Ալեքսեյ Իլարիոնովիչ ՇՎԵԴՉԵՆԿՈՅԻՆ, առաջատար կոնստրուկտորներ,—«ԻԼ — 18» մարդատար ինքնաթիռի կոնստրուկցիայի մշակման և ստեղծման համար:

3. Իլյա Իվանովիչ ԿՈՐՈԲՈՎԻՆ, դիրեկտոր, Վասիլի Իվանովիչ ՍՈՒՐՑՎՈՎԻՆ, դոմնային լաբորատորիայի պետ, Դնեպրոպետրովսկի Պետրովսկու անվան մետալուրգիական գործարանի աշխատողներ, Զոտ Իլյիչ ՆԵԿՐԱՍՈՎԻՆ, Ուկրաինական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Սև մետալուրգիայի ինստիտուտի դիրեկտոր, Նիկոլայ Իվանովիչ ԿՐԱՍԱՎՑԵՎԻՆ, նույն ինստիտուտի ավագ գիտական աշխատակից, Գեորգի Գրիգորևիչ ՕՐԵՇԿԻՆԻՆ, դիրեկտոր, Անատոլի Նիկոլաևիչ ՉԵՉՈՒՐՈՅԻՆ, դոմնային ցեխի պետ, Դնեպրի Ձերժինսկու անվան մետալուրգիական գործարանի աշխատողներ, Լև Դմիտրիևիչ ՅՈՒՊԿՈՅԻՆ, դիրեկտոր, Բորիս Լազարևիչ ՏԱՎՐՈԳԻՆ, դոմնային ցեխի պետ, Սերգո Օրջոնիկիձեի անվան «Զապորոժստալ» մետալուրգիական գործարանի աշխատողներ, Իվան Միխայլովիչ ԵԿՏՈՎԻՆ, դիրեկտոր, Գեորգի Ալեքսեևիչ ՊԱՆԵՎԻՆ, դոմնային ցեխի պետ, Ստալինոյի Ստալինի անվան մետալուրգիական գործարանի աշխատողներ.— դոմնային արտադրության մեջ բնական գազի արմատավորման համար:

4. Ալեքսեյ Վասիլևիչ ՈՒԼԻՏՈՎՍԿՈՒԻՆ, աշխատանքի ղեկավար, Նիկոլայ Մատվեևիչ ԱՎԵՐԻՆԻՆ, ՌՍՖՍՌ Շինարարության մինիստրության «Սեզապմոնտաժավտոմատիկա» տրեստի նախագծային-կոնստրուկտորական բյուրոյի ավագ ինժեներ, Վենիամին Գեորգիևիչ ԿՐԱՍԻՆԿՈՎԻՆ, Գիտահետազոտական ինստիտուտի գիտական աշխատակից,— անմիջապես հեղուկ փուլից բարակ և գերբարակ մետաղաթելեր ստանալու մեթոդի մշակման համար:

5. Արդուլխալաք Արդուլատիպովիչ ԲԱՔԻՐՈՎԻՆ, երկրաբանական-հանքաբանական գիտությունների դոկտոր, Պյոտր Նիկոլաևիչ ԵՆԻԿԵԵՎԻՆ, ՍՍՌՄ Երկրաբանության և ընդերքի պահպանության մինիստրության նավթի ու գազի բաժնի գլխավոր երկրաբան, Սերգեյ Իվանովիչ ԻԼՅԻՆԻՆ, Եվգենի Վլադիմիրովիչ ԿՈՒԴՐՅԱՇՈՎԻՆ, Բնական գազի համամիութենական Գիտահետազոտական ինստիտուտի Ուզբեկական ֆիլիալի դիրեկտոր, Լեոնիդ Գրիգորևիչ ԺՈՒԿՈՎՍԿՈՒԻՆ, գլխավոր երկրաբան Կոնստանտին Աքիլեսովիչ ՍՈՏԻՐԻԱԴԻԻՆ, գրասենյակի գլխավոր երկրաբան, Վասիլի Իվանովիչ ՉԵՌՆՈՎԻՆ, խմբի պետ, «Ուզբեկնեֆտեգազոազվեդկա» տրեստի աշխատողներ,— բնական գազի Գազլինսկի՝ ՍՍՌՄ-ում խոշորագույն հանքավայրի հայտնաբերման և հետախուզման համար:

6. Օլգա Կիրիլովնա ԿՈԼՈՄԻԵՑԻՆ, Բելայա Ցերկովի փորձասելեկցիոն կայանի շաքարի ճակնդեղի սելեկցիայի բաժնի վարիչ, Մարիա Գրիգորևնա ԲՈՐԴՈՆՈՍԻՆ, Ուկրաինայի Գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի ավագ գիտական աշխատակից, Իվան Ցեոկտիստովիչ ԲՈՒԶԱՆՈՎԻՆ, Շաքարի ճակնդեղի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր, Վլադիմիր Պավլովիչ ԶՈՍԻՄՈՎԻՉԻՆ, նույն ինստիտուտի ավագ գիտական աշխատակից, Գրիգորի Սեմյոնովիչ ՄՈԿԱՆԻՆ, գիտական աշխատակից, Ալեքսանդր Վասիլևիչ ՊՈՊՈՎԻՆ, շաքարի ճակնդեղի սելեկցիայի բաժնի վարիչ, Յալտուշկովսկի սելեկցիոն կետի աշխատողներ,— շաքարի ճակնդեղի նոր ձև ստեղծելու և միասերմ պտուղներով շաքարի ճակնդեղի սորտեր ստանալու համար:

## ՍՍՌ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԼԵՆԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Գրականության և արվեստի Լենինյան մրցանակների կոմիտեն որոշեց՝ 1960 թվականի Լենինյան մրցանակներ շնորհել գրականության, ժուռնալիստիկայի ու հրապարակախոսության և արվեստի բնագավառի առավել աչքի ընկնող նվաճումների համար.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Մաքսիմ Ֆադևիչ ՌԻԼՍԿՈՒՆ,—«Վարդեր ու խաղող» և «Հեռավոր երկնակամարներ» բանաստեղծությունների գրքերի համար:

2. Միրզո ԹՈՒՐՍՈՒՆ-ԶԱԴԵԻՆ,— «Ասիայի ձայնը» բանաստեղծությունների ու պոեմների գրքի համար և «Հասան-արբաքեշ» պոեմի համար:

3. Միխայիլ Ալեքսանդրովիչ ՇՈԼՈԽՈՎԻՆ,—«Հերկած խոպան» վեպի համար: I և II գրքեր:

### ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Ալեքսեյ Իվանովիչ ԱՋՈՒԲԵՅԻՆ, Նիկոլայ Մատվեևիչ ԳՐԻԲԱՉՈՎԻՆ, Գեորգի Ալեքսանդրովիչ ԺՈՒԿՈՎԻՆ, Լեոնիդ Ֆյոդորովիչ ԻԼՅԻՉՈՎԻՆ, Վլադիմիր Սեմյոնովիչ ԼԵԲԵԴԵՎԻՆ, Եվգենի Վլադիմիրովիչ ԼԻՏՈՇԿՈՅԻՆ, Վիկենտի Ալեքսանդրովիչ ՄԱՏՎԵԵՎԻՆ, Անդրեյ Ստեպանովիչ ՇԵՎՉԵՆԿՈՅԻՆ, Գրիգորի Տրոֆիմովիչ ՇՈՒՅՍԿՈՒՆ, Պավել Ալեքսեևիչ ՍԱՏՅՈՒԿՈՎԻՆ, Օլեգ Ալեքսանդրովիչ ՏՐՈՅԱՆՈՎՍԿՈՒՆ, Վլադիմիր Իվանովիչ ՕՌԼՈՎԻՆ,— «Երես առ երես Ամերիկայի հետ: Պատմվածք Ն. Ս. Խրուշչովի ԱՄՆ կատարած ուղևորության մասին» գրքի համար:

### ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Սերգեյ Ֆյոդորովիչ ԲՈՆԴԱՐՉՈՒԿԻՆ՝ ռեժիսոր և Սոկոլովի դերակատար, Վլադիմիր Վասիլևիչ ՄՈՆԱԽՈՎԻՆ՝ օպերատոր, «Մարդու ճակատագիրը» գեղարվեստական ֆիլմի համար:

2. Ռոման Լազարևիչ ԿԱՐՄԵՆԻՆ՝ ռեժիսոր, Ջավանշիր Մուսա օղլի ՄԱՄԵԴՈՎԻՆ՝ օպերատոր, Սերգեյ Եվգենևիչ ՄԵԴԻՆՍԿՈՒՆ՝ օպերատոր,— «Պատմվածք Կասպիականի նավթագործների մասին» և «Ծովը նվաճողները» գունավոր դոկումենտալ ֆիլմերի համար:

3. Դավիթ Ֆյոդորովիչ ՕՅՍՏՐԱԽԻՆ,— երաժշտական կատարողական արվեստի բնագավառում աչքի ընկնող նվաճումների համար:

4. Գեորգի Վասիլևիչ ՍՎԻՐԻԴՈՎԻՆ — Վ. Մայակովսկու խոսքերով գրած «Պաթետիկական օրատորիայի» համար: